



Disability
Rights
California

Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ
Անվճար հեռախոսահամար (800) 776-5746

Աջակցվող զբաղվածություն. Երկարաձգված ծառայություններ և գործի ավարտի ամփոփաթեթ

Հունվար, 2016թ., Հրատ. #5582.10 - Armenian

1. Ի՞նչ է աջակցվող զբաղվածությունը (supported employment):

Կալիֆորնիայի նահանգային կանոնակարգող օրենքի համաձայն, որը կարգավորում է Վերականգնողական վարչության (DOR, Department of Rehabilitation) կողմից ֆինանսավորվող մասնագիտական վերականգնողական ծառայությունները, աջակցվող զբաղվածությունը նշանակում է.

«մրցունակ զբաղվածություն ներառական միջավայրում կամ աշխատանք այնպիսի աշխատանքային միջավայրում, որում անհատները հնարավորություն ունեն աշխատել մրցունակ աշխատանքային միջավայրում, որը համապատասխանում է նրանց ուժեղ կողմերին, ռեսուրսներին, նախընտրություններին, մտահոգություններին, ունակություններին, կարողություններին, հետաքրքրություններին և իրազեկված ընտրությանը՝ շարունակական օժանդակող ծառայություններ տրամադրելով ծանր հաշմանդամություն ունեցող անձանց... ում համար մրցունակ զբաղվածությունն ավանդաբար տեղի չի ունեցել կամ ում մրցունակ զբաղվածությունն ընդհատվել կամ ընդմիջվել է ծանր հաշմանդամության պատճառով, ինչպես նաև նրանց համար, ում հաշմանդամության բնույթը և ծանրությունն ինտենսիվ աջակցվող զբաղվածության ծառայությունների կարիք ունեն [DOR]-ի կողմից և երկարաձգված

ծառայությունների կարիք անցումից հետո...իրենց աշխատանքը կատարելու համար»:

Տե՛ս Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգրքի (C.C.R., California Code of Regulations) 9–րդ գլուխը, § 7028(a): Աջակցվող զբաղվածության ծառայությունները պետք է բավարարեն յուրաքանչյուր սպառողի մասնագիտացված կարիքները:

Եթե Դուք DOR հաճախորդ եք «աջակցվող զբաղվածության» (“supported employment”) Անհատականացված աշխատանքային ծրագրով (IEP, Individualized Plan for Employment), ի վերջո DOR-ը կորոշի, որ Ձեր աշխատանքը կայուն է և Ձեր DOR գործը կփակվի: Ձեր աջակցության շարունակական ծառայությունները պետք է ֆինանսավորվեն մեկ այլ աղբյուրից, որը կոչվում է «երկարաձգված ծառայություն» (“extended service”): Մինչ Դուք կհասնեք այս կետին, Դուք պետք է համայնքային աշխատանքում ներառված լինեք՝ մրցունակ աշխատավարձով՝ աշխատելով առավելագույն աշխատանքային ժամերի քանակով, որը հիմնված է Ձեր եզակի հանգամանքների և «իրազեկված ընտրության» (“informed choice”) վրա:

2. Ի՞նչ է իրազեկված ընտրությունը:

Իրազեկված ընտրությունը տրամադրվում է ողջ մասնագիտական վերականգնողական գործընթացի միջոցով: Իրազեկված ընտրությունը որոշում կայացնելու գործընթաց է, որի ժամանակ Դուք՝ սպառողը, հնարավորություն ունեք զբաղվածության մասին համապատասխան տեղեկություններ ստանալ: Սա նշանակում է, որ **Դուք** պետք է ընտրեք (մասնատան վերականգնողական խորհրդատուի աջակցությամբ և կախված մատչելի ռեսուրսներից) Ձեր զբաղվածության արդյունքը, Ձեր միջանկյալ նպատակները, այն ծառայությունները, որոնց կարիքը կունենաք՝ Ձեր աշխատանքի արդյունքին, ինչպես նաև աշխատանքի մատակարարներին հասնելու համար: 9 C.C.R. § 7029.6.

3. Որո՞նք են երկարաձգված ծառայությունները:

Երկարաձգված ծառայությունները այն շարունակական աջակցման ծառայությունները և այլ համապատասխան ծառայություններն են, որոնց կարիքը Դուք ունեք՝ օժանդակելու և պահպանելու Ձեր

աջակցվող զբաղվածությունը՝ Ձեր DOR գործի փակվելուց հետո: 9 C.C.R. § 7014.1.

4. Ո՞վ կարող է Երկարաձգված ծառայություններ տրամադրել:

Երկարաձգված ծառայությունները կարող են տրամադրվել նահանգային գործակալության, մասնավոր հասարակական կազմակերպության, աշխատակցի կամ որևէ այլ համապատասխան ռեսուրսի կողմից: 9 C.C.R. § 7014.1: Սա կարող է ներառել այլ ծառայությունների համակարգումը, որոնք ստանալու իրավունք ունեք այլ դաշնային կամ նահանգային ծրագրերից: 9 C.C.R. § 7131.1(a)(5): Օրինակ, եթե Դուք տարածաշրջանային կենտրոնի հաճախորդ եք, երկարաձգված ծառայություններն ամենայն հավանականությամբ կտրամադրվեն տարածաշրջանային կենտրոնի կողմից: Դուք կարող եք նախատեսել DOR-ի հետ Ձեր IPE-ի հանդիպմանը (հանդիպումներին) Ձեր տարածաշրջանային կենտրոնի ծառայությունների համակարգողին հրավիրելու հնարավորություն՝ երաշխավորելու, որ երկու գործակալություններն ունեն Ձեր զբաղվածությանը վերաբերող իրենց անհրաժեշտ տեղեկությունները, որպեսզի կարողանան համակարգել Ձեր ծառայությունները:

5. Ինչպե՞ս կարող եմ ֆինանսավորում գտնել իմ երկարաձգված ծառայությունների համար, եթե տարածաշրջանային կենտրոնի հաճախորդ չեմ:

Ձեր IPE-ի ստեղծման ընթացքում Դուք և DOR-ը կորոշեք երկարաձգված ծառայությունների աղբյուրը՝ Ձեր շարունակական աջակցող ծառայությունները տրամադրելու կամ ֆինանսավորելու համար: DOR-ը նաև կարող է Ձեր IPE-ում ներառել հիմքերի նկարագրություն, որոնք թույլ կտան եզրակացնելու, որ հիմնավորված ակնկալիք կա աղբյուրների ապագայում հասանելիության մասին: 9 C.C.R. § 7131.1(a)(3): Այլ կերպ ասած, եթե Դուք և DOR-ն ի վիճակի չեք երկարաձգված ծառայությունների մատակարար գտնել Ձեր IPE-ի ստեղծման ընթացքում, DOR-ը դեռ կարող է օգնել Ձեզ աջակցվող զբաղվածության ծառայություններով, եթե հիմնավորված ակնկալիք կա, որ երկարաձգված ծառայությունների տրամադրողն ապագայում հասանելի կլինի:

6. Որո՞նք են երկարաձգված ծառայությունների և ֆինանսավորողների օրինակները:

Որոշ երկարաձգված ծառայություններ վճարվում են գործակալության, աշխատանքային խթանման ծրագրի կամ ընտանիքի անդամի կողմից, իսկ մյուսները կարող են դրամական արժեք չունենալ: Ձեր գործատուն, ընտանիքի անդամը կամ աշխատակիցը կարող են ի վիճակի լինել Ձեզ թույլ տրամադրել՝ օգնելու Ձեզ պահպանել Ձեր աշխատանքը: Երբ երկարաձգված ծառայությունն անվճար է Ձեզ համար. սա կոչվում է «բնական աջակցություն» (“natural support”):

Այն ծառայությունները, որոնք ֆինանսավորման կարիք ունեն, կարող են վճարվել այլ միավորումների/աղբյուրների կողմից, որոնք օգնում են Ձեզ և համաձայն են օգնել հետագայում Ձեր ծառայության ծրագրի շրջանակներում: Սա կարող է ներառել դպրոցական IEP, Անկախ ապրելակերպի կենտրոնի անկախ ապրելակերպի ծրագիր (Independent Living Center’s Independent Living Plan), Սոցիալական Ապահովության վարչության (SSA, Social Security Administration) խանգարման առնչվող աշխատանքային ծախսեր (IRWE Impairment-Related Work Expenses) Սոցիալական ապահովության վարչության ծրագիր ինքնաջակցության հասնելու համար (PASS, Plan for Achieving Self Support) կամ «Աշխատանքի տոմս» ծրագիրը (TTW, Ticket to Work): 9 C.C.R. §7131.1(a)(5): IRWE-ի, PASS-ի և TTW-ի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս «Պետական նպաստներ հաշմանդամ անձանց համար թիվ #5014.01. հրապարակումը (Public Benefits for People with Disabilities), Pub #5014.01.:

Օրինակ, եթե Դուք Ապահովության լրացուցիչ եկամուտ (SSI, Supplemental Security Income) և Սոցիալական ապահովության հաշմանդամության եկամուտ (SSDI, Social Security Disability Income) եք ստանում, Դուք կարող եք իրավունակ լինել կուտակումներ կատարել Ձեր շարունակական ծառայությունների համար՝ PASS ծրագրի միջոցով: PASS ծրագիրը հաշմանդամ անձին հնարավորություն է ընձեռում առանց տույժի եկամուտ և ռեսուրսներ խնայել՝ աշխատանքային նպատակին առնչվող վճարումներ կատարելու համար: Եթե Դուք միայն SSI եք ստանում, կարող է հիմնավորված ակնկալիք լինել, որ Դուք կարող եք PASS-ի համար իրավունակ լինել, երբ սկսեք

աշխատել և եկամուտ վաստակել: Դաշնային կանոնակարգերի (C.F.R., Code of Federal Regulations) 20-րդ գլուխ § 413.12261

IRWE-ն աշխատաքային խթանող ծրագիր է SSA-ի միջոցով, որտեղ այն դրամը, որը Դուք ծախսում եք հաշմանդամությանն առնչվող որևէ աշխատանքի հետ կապված ծախսի համար, այդ թվում Ձեր աջակցության շարունակվող ծառայությունները, չեն հաշվարկվի Ձեր վաստակած եկամտում: 20 C.F.R. § 416.1112(c)(6): Սա Ձեզ հնարավորություն է տալիս աշխատել՝ SSA-ի միջոցով տրված Ձեր ամսական նպաստից ավելին խնայելով:

7. DOR-ը կարող է փակել իմ գործը, եթե անհնար է երկարաձգված ծառայություններ գտնել:

Այո: Եթե Դուք երկարաձգված ծառայություններ եք պահանջում աջակցվող զբաղվածության համար, և երկարաձգված ոչ մի ծառայություն մատչելի չէ, DOR-ը կարող է փակել Ձեր գործը: 9 C.C.R. § 7179.3(a)(8): Սակայն, DOR-ը կարող է չփակել Ձեր գործը, եթե Դուք տարածաշրջանային կենտրոնի հաճախորդ չեք: Երկարաձգված ծառայությունները կարող են տրամադրվել տարածաշրջանային կենտրոնից բացի մի շարք այլ աղբյուրներից: DOR-ը պետք է աջակցի Ձեզ՝ երկարաձգված ծառայությունների այլ աղբյուրներ գտնելու համար: Սա կարող է ներառել այլ գործակալություններ կամ համայնքային կազմակերպություններ, որոնց ծառայությունների ստացման իրավունքն ունեք: Երկարաձգված ծառայությունները կարող են նաև տրամադրվել ընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից. սա կոչվում է բնական աջակցություն: Որոշ իրավիճակներում DOR-ը կարող է Ձեզ շարունակական աջակցության ծառայություններ և այլ համապատասխան ծառայություններ տրամադրել, որոնց կարիքը Դուք ունեք՝ Ձեր զբաղվածությունը որպես «հետ զբաղվածության ծառայություններ» պաշտպանելու համար (տե՛ս ստորև տրված հարց 9-ը), եթե դրանք երկարաձգված ծառայությունների մատակարարի կողմից անհասանելի են: 9 C.C.R. § 7028.1(b):

8. Ե՞րբ DOR-ն իմ զբաղվածությունը կայուն կհամարի և կփակի իմ գործը:

Երբ Դուք սկսեք աշխատել, DOR-ը պետք է Ձեզ շարունակական աջակցության ծառայություններ և այլ համապատասխան ծառայություններ տրամադրի, որոնց կարիքն ունեք՝ Ձեր աշխատանքը պահպանելու համար: Բազմաթիվ հանգամանքներում DOR-ն այս ծառայությունները կտրամադրի միայն մինչև 24 ամսվա ընթացքում, սակայն և՛ Դուք և՛ Ձեր Վերականգնողական խորհրդատուն կարող եք համաձայնության գալ, որ ժամանակացույցը պետք է երկարաձգվի՝ հասնելու Ձեր IPE-ի նպատակին: (Նոր աշխատանքի ներդրման և հնարավորության մասին օրենքը (WIOA, Work Investment and Opportunity Act) երկարաձգել է աջակցության ծառայություններ տրամադրելու ժամկետը 18-ից 24 ամիս՝ ժամանակաշրջանը երկարաձգելու ընտրանքով, տե՛ս Յանրային օրենք թիվ 113-128, հոդված 404-ը (Public Law) No., 113-128, Section 404 տե՛ս նաև 9 C.C.R. § 7028.1(a)):

Ձեր DOR գործը կարող է բարեհաջող կերպով փակվել, երբ.

- Դուք հասնեք Ձեր IPE-ում նշված աշխատանքային նպատակին, իսկ Ձեր զբաղվածությունը համապատասխանի Ձեր ուժեղ կողմերին, ռեսուրսներին, նախընտրություններին, մտահոգություններին, ունակություններին, կարողություններին, հետաքրքրություններին և իրազեկված ընտրությանը. նաև
- Ե՛վ Դուք և՛ DOR-ը համաձայնեք, որ Ձեր աշխատանքը բավարար է և Դուք լավ եք կատարում այն, նաև
- Ֆինանսավորումը փոխանցվել է երկարացված ծառայությունների աղբյուրի, նաև
- Դուք պահպանել եք զբաղվածությունը՝ երկարաձգված ծառայությունների ծրագրի մեջ ընդգրկվելուց առնվազն 60 օր առաջ՝ երաշխավորելու Ձեր զբաղվածության արդյունքի կայունությունը և երկարաձգված ծառայությունների ծրագրում ընդգրկվելուց առնվազն 60 օր հետո, նաև
- միջամտության Ձեր տոկոսը [օրինակ՝ աշխատանքի համար որքան վերապատրաստման կարիք ունեք]

Էջ 7` 8-ից

- առնվազն 60 օրվա համար՝ 20 տոկոսից ոչ ավել, կամ
- առնվազն 90 օրվա համար՝ 25 տոկոսից ոչ ավել, կամ
- առնվազն 120 օրվա համար՝ 30 տոկոսից ոչ ավել:

See 9 C.C.R. § 7179.7:

9. Որո՞նք են հետ զբաղվածության ծառայությունները:

Եթե Դուք շարունակեք ծառայությունների կարիք ունենալ՝ Ձեր աշխատանքը կատարելու համար, Դուք կարող եք DOR-ից ծառայություններ խնդրել Ձեր գործը փակվելուց հետո մեկ տարվա ընթացքում: Սրանք կոչվում են «հետ զբաղվածության ծառայություններ» (“post-employment services”) և նպատակ ունեն օգնելու Ձեզ պահպանել այն առաջընթացները, որոնք Դուք արձանագրել եք Ձեր մասնագիտական վերականգնողական աշխատանքի միջոցով: Այն անձանց համար, ում գործը փակվել է «աջակցվող զբաղվածությամբ»՝ որպես զբաղվածության նպատակ, հետ զբաղվածության ծառայությունների տրամադրումը սահմանափակված է ժամանակով և տրամադրվող ծառայությունների շրջանակով: Այս դեպքերում հետ զբաղվածության ծառայությունները սահմանափակված են միայն այն ծառայություններով, որոնք մատչելի չեն երկարաձգված ծառայությունների աղբյուրի միջոցով (տե՛ս «երկարաձգված ծառայությունների» վերաբերող վերոհիշյալ քննարկումը) և նաև պետք է անհրաժեշտ լինեն՝ աշխատանքի ընթացքում անձին աջակցելու և նրա զբաղվածությունը պահպանելու համար: 9 C.C.R. § 7176.

10. Ի՞նչ տեղի կունենա, եթե ես աջակցվող զբաղվածության կամ երկարաձգված ծառայությունների կարիք ունենամ:

Եթե Դուք համաձայն չեք Ձեր գործի փակման հետ կամ հարցեր ունեք Ձեր աջակցվող զբաղվածության կամ երկարաձգված ծառայությունների վերաբերյալ, կարող եք դիմել Հաճախորդների աջակցության ծրագրին (CAP, Client Assistance Program)՝ զանգահարելով DRC՝ (800)776-5746 հեռախոսահամարով կամ TTY (800)719-5798 հեռախոսահամարով, կամ այցելել՝ <http://www.disabilityrightsca.org/pubs/547401accessible.pdf>

Էջ 8` 8-ից

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից,
հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք`*

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).